

ի նմանէ. որպէս զՆոյ ապրեցոյց եւ զաշխարհս
ամենայն կորոյս. եւ այս բաւ է իմաստնոց :

ԲՆԱԿԻԶՔ ԲԱՂԱՔԻՆ

Եւ Լէհքն են լաւ քրիստոնեայք. բայց
Օռուսն շատ է քան զԼէհ, տասնապատիկ, որ 50
են հոռմի դաւանութեամբ եւ Ստամպոլայ պա-
տրիարզին թապի. եւ Լէհք՝ Փափին: Բայց
հերձուածողքն բազում են եւ ազգ եւ ազգ, զոր
Լութէր կոչեն. կան եւ Արիանոսք եւ այլ չա-
բաշար հայհոյիչք, որք են ԺԴ, ԺԵ ազգ, մի 55
քան զմի չար. զոր ոչ թէ զօրէնս նոցա կամ
զհաւատս յիշելոյ է, այլ եւ ոչ զանուանս. զի
քան զՀրեայս եւ զՏաճիկս վատթարագոյնք են.
եւ այս աշխարհս բնաւ հոռոմ չկայ. միայն
Լոյլ երկու իրեք տուն հոռոմ: 60

ՀԱՅՔ Ի ԲԱՂԱՔՍ ԼԵՀԱՍՏԱՆԻ

Կան եւ այլ քաղաքնին սակաւ հայեր, որ-
պէս Կամէնից, Նաղլովցա, Զամոսցա, Լուց-
քա, Մանքէրման: Առաջն Լուցքան ԸՃ տուն
էր, զեղեր, ազարակնի ունէր եւ շատ վա-
խրՓք եւ անգ էր յառաջն աթոռ. այժմ եր- 65
կու տուն է հայի. բայց քարէ եկեղեցին եւ
զեղն կայ դեռ: Եւ մեծն Մանքէրման ասին
թէ յորժամ սէֆէք լինէր, հինգհարիւր հոգի
կ'ելէր Հայոց ի պատերազմ, եարար պահա-
տուրնի. եւ այժմ չորս տուն հայի մնացել է. 70
բայց շատ խանութնի, վախրՓ տներ, ջաղացք,
արտեր, պախչանի եւ այլք դեռ Հայոց ձեռքն